

1956ին ակադեմիային ան-
ջատուեցաւ զիւրատուեական
գիտութիւններու բաժանմունքը՝
իւր հիմնարկներով, իսկ 1963ին
ընկերական գիտութիւններու բա-
ժանմունքը՝ իւր հիմնարկներով,
իսկ կեղերական կոմիտէի որո-
շումով գիտական և բժշկական
բազմաթիւ բաժինները՝ ինչպէս
նաեւ պատմական, զբոսաշրջ-
ութեան և արեւտարի թանգարան-
ները այլ գերատեսչութիւններու
հնձրութեամբ:

Այսօր իւր 20ամիակներ, հայ-
կական ակադեմիան ունի 26 հիմ-
նարկներ: Ակադեմիայի կազմով
մէջ ժամանակէն ընթացքին ընտ-
րուած են նոր անուններ ներկա-
յացուցիչներ:

Ակադեմիկոսներ ընտրուած
են մեր աշխատւոր ժողովուրդի
ծոցէն. անձնք՝ որոնք հասանաբար
սփռուած մէջ շունենային կրթեք
այլ նշարարութիւնը:

Ստորև կուտանք վերև յիշ-
ուածներու կարգին նաև անոց
անունները՝ որոնք աճած են Խ.
Հայաստանի մէջ և որոնք մեր
երկրի վերելքին հետ քաջաւ առ
քաջ նուաճութիւնը արձանագրած
են:

Գ. Ազատեան, Ա. Ա. Ասա-
բեկան, Գ. Բարաշեան, Գ.
Դասթեան, Ս. Երևան, Ա. Իս-
ախան, Ա. Խաչատրեան, Ս. Ս-
վ. Կասեան, Արտ. Կարինեան,
Նարայէ Զարթովեան, Աշ. Յով-
հաննիսեան, Ա. Գ. Յովհաննիս-
եան, Ար. Դարբիեան, Մ. Մա-
նուկեան, Հ. Մարաքեան, Ա.
Մարկեան, Մ. Մարչեան, Ա.
Մնջոյեան, Ա. Նարբանտեան,
Ա. Նազարով, Մ. Ներսիսեան,
Ա. Շահինեան, Մ. Ջրբաշեան,
Մարտ. Սարեան, Ա. Մ. Տէր
Կարապետեան, Բ. Ա. Փանար-
շեան:

Ակադեմիայի ներկայ կազ-
մին մէջ կան ըստ Հ. Բունիսթի-
եանի 39 իրական անդամ (ա-
կադեմիկոս) և 32 թղթակից ան-
դամ:

Հայկական ակադեմիայի
արձանագրութեան տակ դրուե-
ան 1943ին միայն 16,5 միլիոն
ոտուրի, իսկ 1963ին 98 միլիոն
ոտուրի:

1947 թ. սկսած անընդմէջ
ակադեմիայի նախագահ ընտրուած
է Վիգորտ Զամբարձուեան: Փոխ
նախագահ ընտրուած են ակադե-
միկոսներ Վ. Հ. Գուրգենեան,
Ա. Իոսիֆեան, Մ. Ներսիսեան,
Ա. Մնջոյեան, Նարայէ Զարթ-
ովեան, Աշոտ Յովհաննիսեան
Հ. Բունիսթեան:

Գիտական և գիտատեխնի-
կական աշխատողներու թիւը 410
մարդէն հասած է 3100ի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՎԱԴԵՄԻԱՅԻ ՔԱՆ ՏԱՐԻՆ

Եթէ 1943ին ակադեմիայի
ցանցին մէջ աշխատողներէն գի-
տութիւններու թիւկանուո կամ
գիտորդ աստիճան ունէին միայն
58 հոգի, ապա այժմ անոց թիւն
է 518 հոգի:

1943ի 128 մամուլ ծաւալով
հրատարակուած 43 անուն աշխա-
տութեան փոխարէն, 1963ին կը
հրատարակուի 152 աշխատու-
թիւն 1900 մամուլ ծաւալով: 195
հազար տպագրեալով: Տեղիկա-
գրներու մասին այլ առիթու
անդրադարձած ենք: Յիշենք
միայն որ 8 այլազան մարզերու
յատուկ ամսաթերթեր կամ պար-
բերաթերթեր են անոնք:

Ակադեմիայի գիւրգիւրու Փո-
տր 1943ի հետ ըստգրուած հասած
է 130 հազարէն 1,9 միլիոն
է Հ. Բունիսթեան կը նշէ,
«Տարեկան գիտութեան մէջ
է՛լ աւելի բարձր հնչեց հայաս-
տանի գիտնականներու ձայնը,
որոնք նոր և ինքնատուրջ շատ
բան մտողեցած են հայրենական
և համաշխարհային գիտութեան
մէջ: Լայն ճակատով հետազո-
տական աշխատանքներ տարուե-
ցան գիտութեան տեսել կարե-
ւոր ճիւղերով, որոնք ունին
ինչպէս տեսական, այնպէս էլ
ժողովրդա-տնտեսական խոշոր
նշանակութիւն»:

Յատուկ նշանակութիւն տը-
րուած է աստղաբաշխութեան,
ուստի—Ֆիզիքային հաշուողա-
կան թուաբանութեան, էլեկտրո-
նիկի և գիտութեան ու Ֆիզիքի
ու փիլիսոփայ աշխարհ ճիւղերուն
զարգացման:

Հարկ չկայ շեշտելու Արագածի
լանջին կողմ իրականացնողներ
և կարծեսութեան մասին: 316
միլիազգային աստղաբաշխարանի
բու հետ անիկա կապեր ունի:

Հ. Բունիսթեանի ապա կու-
տայ մանրամասնութիւններ գի-
տութեան, մաթեմատիկայի,
տեխնիքական և օդաչափայն քե-
միային, կենսաբանութեան, կեն-
սապահանջական, ֆիզիոլոգիայի,
միքրոպներու, ջրային ուժի օգ-
տագործման, ընտելանեան ճա-
տագործիչներու մարզին մէջ յա-
ուալ տարուող աշխատանքներու
մասին:

Հայագիտական մարզի մէջ
կ'աշխատին 420 գիտական աշ-
խատողներ, որոնցմէ 185ը գի-

տութեան տոկոսներն և թեկնա-
ծուներ:

Ստեղծուած են շարք մը նոր
ուղղութիւններ, պատմութեան,
լեզուի, զբոսանութեան, հնա-
պատմութեան և արդարութեան,
տնտեսագիտութեան բաժիններուն
մէջ, արեւելագիտութեան և փի-
լոսոփայութեան մարզերուն մէջ
36 բաժիններ կը գործեն:

Հայաստանի հայագէտները
հրատարակած են արժեքաւոր
աշխատութիւններ նուիրուած հայ
ժողովուրդի պատմութեան, լե-
ռուի և պրականութեան, արուես-
տի, փիլիսոփայութեան հարցե-
րուն:

Բարձրաթիւ պատմական հար-
ցեր իրենց լուծումը դտած են,
նախ ժողովուրդի ընկերային—
տնտեսական պայմանները, պա-
սակաբազային ու ազգային պա-
տագրական պայքարները իրենց
լայն ուսումնասիրութեան առար-
կայ դարձած են:

Յիշատակարաններու, մանր
մամուլակարգութիւններու հայ-
ուսական յարաբերութիւններու
և առ այդ արթնելու հրատա-
րակութիւնը կարեւոր ներդրում
է անդիտապա:

Հայաստանի ստղագիտական
հասարակաբք, միջնադարեան
Հայաստանի արհեստներու և քա-
ղաքներու ընկերային շարժումը
ներու և հայ հասարակական մտ-
քի պատմութեան վերաբերեալ
ուսումնասիրութիւններ կատա-
րուեցան:

Ներկային շուրհաստորով լոյս
կը տեսնէ հայ ժողովուրդի պատ-
մութիւնը, որուն Ա. հաստորը
թերթեանէլ հտք, կեկար այն
հաստատ համոզման, որ իրապէս
նոր և գիտական ոգիով մը լոյս
ընծայելու ճիւղը անհրելու է պատ-
մութեան:

Հնագիտութիւնը հս պայն
չարկերու վրայ յառաջացած է,
որոնց շնորհիւ կը փաստուի, թէ
հին քարէ շրջանի և նոր քարէ
շրջանի մարդիկ պարած են Նա-
նի աշխարհին մէջ, և որոնց
շնորհիւ հնարար կը դատուայ
ուսումնասիրելու Արարտիւն
շրջանի կենցաղու ու քաղաքակր-
թութիւնը: Այս առթիւ յատկա-
նշանակալ է կարմիր Բլուրի և
Արին բերդի պեղումները:

Գրանիի պեղումներով հիմք

դրուած է ուսումնասիրման յունա-
—Տելլիքեական ժամանակաշրջանի
Հայաստանի մշակոյթի զարգաց-
ման փուլերուն: Դուինի պե-
ղումները միջնադարեան հայ
կեանքի քաղաքներու և անոնց
տնտեսական կարմարում մա-
սին ընդարձակ նիւթեր կուտան:
Զգալի աշխատանքներ կատար-
ուած են միջնադարու հայկական
արձանագրութիւններու հասա-
ման և հրատարակման ուղղու-
թեանը:

Ազգագրագէտներ ուսումնա-
սիրած են Հայաստանի տարբեր
շրջաններու և քաղաքներու, ըը-
նազուկութեան հին ու նոր կենցաղ-
ը, անոր մէջ կը պատ խոշոր տե-
կադարձերը, և ձեռնարկած են
կազմելու Հայաստանի ազգագ-
րական քարտէսը:

Բանասէները կ'ուսումնասիր-
են ժողովրդական ստեղծագոր-
ծութիւնն ու կը հրատարակեն
հայկական ստաններու, ստանիւն-
բու և Տէքնաբանութեան ժողովածու-
ներ:

Շահեկանութեան համար կու-
տանք Մ. Արեղիանի անուան
գրականութեան կրտսերուի և
լեզուի, արուեստի, փիլիսոփա-
յութեան և գիտական քարտերու
վերաբերեալ Հ. Բունիսթեանը
շահեկան տեղեկութիւնները հս:

Մ. Արեղիանի անուան զբա-
կանութեան կրտսերուի կողմէ-
տերը նշանակալի աշխատաք է
կատարել հայ գրականութեան
գիտական պատմութիւնը ստեղ-
ծելու համար: Արդէն հրատարա-
կուել են հայ կրտսի գրողներ
Խոջաբաշխ Արզումանի երկերի 10
հատորակը, Միքայէլ Նարանկե-
անի երկերի յոթ հատորակը,
Յովհաննէս Թումանյանի երկերի
6 հատորակը, Գարեթէլ Սուռ-
զուկեանի երկերի չորս հատոր-
ակը, Յակոբ Յակոբեանի երկե-
րի չորս հատորակը, Եղիշէ Մա-
րիեցի երկերի առաջին երկու հա-
տորակը: Երկուր տարբեր յա-
մատ աշխատանքի հետեանքով
պատրաստուել և տպագրուել են
«Հայ նոր գրականութեան պատ-
մութեան» 1 և 2 հատորակը:

Պատրաստուել են նաեւ յաշորջ
հատորակը: Լոյս է տեսել «Սո-
վետահայ գրականութեան պատ-
մութեան» առաջին հատորը: Մե-
ծանուն հայագէտ Մ. Արեղիանը
«Հայոց հին գրականութեան պատ-
մութեան» 1 և 2 հատորակը լոյս
ընծայուելը յետոյ լուրջ աշխա-
տանք ծաւալուց հայ հին գրա-
կանութեան ուսումնասիրութեան
զոմով:

«1955 թ. սկսուեցին հրատարակուել հայ հին զբաղանութեան պատմութեան տարբեր հարցերին նուիրուած աշխատութիւններ: Յատկապէս քննութեան առարկայ դարձան միջնադարեան հայ տաղերգուների կեանքն ու ստեղծագործութիւնը. լոյս են տեսել «Նաչատուր Կեչառեցի», «Յովհաննէս Երզնկացի», «Մարտիրոս Ղերմեցի», «Յովհաննէս Թրխուրանցի» ուսումնասիրութիւնները:

Լեզուի ինստիտուտի նուսումնների շարքին պէտք է դասուուս—հայերէն քառասոր քառասորանի լոյս ընծայուամբ, հայերէն բացատրական քառասորի առաջին հատորի կազմման աշխատանքը, «Լեզուաբանական քառասոր» և «Հոմանիշների բառարան» կազմելը, հայոց լեզուի քարտարանի ստեղծումը, փորձառական հնչիւնաբանութեան կարիքների հիմնադրումը և այլն: Առանձնապէս կարևոր է նշել ժամանակակից հայոց լեզուի կառուցուածքի ուսումնասիրութեան ուղղութեամբ ծաւալուած աշխատանքը: Ուսումնասիրուած են ժամանակակից հայոց լեզուի կառուցուածքի բազմաթիւ հարցեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՔՍԱՆ ՏԱՐԻՆ

հրատարակուել կամ պատրաստ են հրատարակութեան առանձին մենագրական ուսումնասիրութիւններ, որոնք զրուելու են «Հայերէն գիտական քերականութիւն» եռահատոր աշխատութեան հիմքում: Որոշ զբաղան աշխատանք է կատարուած նաև լեզուի պատմութեան և հայ բարբառների ուսումնասիրութեան ուղղութեամբ: Ինստիտուտում զգալի աշխատանք է կատարուած անուանի հայագետներ Հ. Աճառեանի և Գ. Ղափանցեանի գիտական ժառանգութեան հրատարակման ուղղութեամբ: Լոյս են տեսել Հ. Աճառեանի «Լիակատար քերականութեան» չորս հատորները: Գ. Ղափանցեանի «Հայոց լեզուի պատմութեան հին շրջանը» և «Պատմա—լեզուաբանական աշխատութիւնների» առաջին հատորը:

Զգալի ծաւալ ստացաւ արուեստի ինստիտուտի հայ երաժրչութեան, ճարտարապետութեան թատրոնի, կինոյի, կերպարուեստի և կիրառական արուեստների զծով տարուող աշխատանքը: Արուեստի ինստիտուտի աշխատակիցների կողմից հրատարակուեց մօտ երեսուն անուն աշխատութիւն, որոնք ներառուած են հայ արուեստի պատմութեան և տեսութեան հանդուցային հարցերի ուսումնասիրութեանը: Արուեստի տարբեր բնագաւառների խոշորագոյն ներկայացուցիչների կեանքին և զգրծուելութեանը ինչպէս նաև հայ արուեստի պատմութեան ու տեսութեան վերաբերեալ նոր ֆ. և արժէքաւոր նիւթերի հրատարակմանը: Հրատարակուեցին «Ակնարկ հայ երաժրչութեան», «Ակնարկ հայ ճարտարապետու-

թեան պատմութեան», «Ակնարկ հայ թատրոնի պատմութեան», «Ակնարկ հայ կերպարուեստի պատմութեան» կողկալու աշխատանքները:

Յաջողութիւններ ունեն նաև փիլիսոփայութեան ու արեւելագիտութեան սեկտորները և տընտեսագիտութեան ինստիտուտը: Փիլիսոփայութեան սեկտորը հրատարակել է մի շարք աշխատութիւններ, նուիրուած սոցիալիզմից կոմունիզմին անցնելու օրինաչափութիւնների, պատմական ու գիտակցութիւն կան մատերայիզմի և հայ փիլիսոփայութեան պատմութեան զանազուն հարցերին: Սեկտորի աշխատակիցները մասնակցում են կենտրոնական հրատարակութիւնների մի շարք աշխատանքներին: Արեւելագիտութեան սեկտորը զբաղուած է Մերձատուր ու Միջին Արեւելքի պատմութեան, զբաղանութեան և տնտեսութեան հարցերով, ինչպէս նաև քրտագիտութեան խնդիրներով: Այդ հարցերի շուրջը սեկտորը արդէն հրատարակել է մի շարք աշխատութիւններ:

Հ. ԳԱՆԳՐՈՒՆԻ

(Եար. 3)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՔՍԱՆ ՏԱՐԻՆ

Տնտեսագիտութեան ինստիտուտի գիտական հետազոտութիւնների առարկայ են հանդիսացել ժողովրդական տնտեսութեան զարգացման պրոբլեմները, սոցիալիզմի քաղաքատնտեսութեան հարցերը, Հայաստանի ժողովրդական տնտեսութեան ու հայ տնտեսագիտական մտքի զարգացման պատմութիւնը: Աշխատութիւններ են հրատարակուած նաև Հայաստանի մեքենաշինութեան, թեթև արդիւնարարութեան, տրանսպորտի, շինարարութեան աշխատանքների արտադրողականութեան բարձրացման, աշխատավարձի և աշխատանքի կազմակերպման մասին:

Անցած երկու տասնամակների ընթացքում ակադեմիայում մեծ աշխատանք կատարուեց գիտական կազմերի պատրաստման ասպարէզում, յատկապէս այն գիտական գիտցիպլինների ուղղութեամբ, որոնք նոր են ստեղծում Հայաստանում: Այդ տեսակէտից մեծ օգնութիւն ցոյց տրուեցին Խորհրդային Միութեան խոշորագոյն գիտական կեդրոնների՝ Մոսկուայի ու Լենինկրատի գիտնականները, որոնց ղեկավարութեամբ պատրաստուեցին և գիտութիւնների թեկնածուի ու դոկտորի աստիճաններ ստացան ակադեմիայի տարբեր ինստիտուտների հարիւրաւոր երիտասարդ գիտական աշխատողներ: Բարձրորակ գիտական կազմերի պատրաստման այդ աշխատանքը, յատկապէս ասպիրանտուրայի գծով, շարունակում է նաև ներկայումս: Այսպէս, եթէ 1961 թուի ակադեմիայի ասպիրանտուրայում սովորողների թիւը կազմում էր 158 մարդ, ապա ներկայումս այն կազմում է 241 մարդ: Բացի այդ, 504 մասնագէտներ ղիսերտացիաներ են պատրաստում ասպիրանտուրայից դուրս:

Մի շարք գիտութիւնների գծով Հայաստանի գիտութիւնների ակադեմիայում կատարուող հետազոտական աշխատանքները լայն ճանաչում են գտել մեր ռեսպուբլիկայի սահմաններից դուրս, ինչպէս Խորհրդային Միութեան, այնպէս էլ արտասահմանեան շատ երկիրների գիտական կեդրոններում: Դրան մեծապէս նպաստում է նաև գիտական կազմերի ընդլայնումը բազմաթիւ

երկրների հետ: Միայն վերջին երեք տարիների ընթացքում (1961—1963 թթ.) արտասահմանեան տարբեր երկրներից Խ. Հայաստանի գիտնականների նուաճումներին ծանօթանալու և գիտա— Հետազոտական ինստիտուտներում որոշ ժամանակով աշխատելու են եկել տարբեր մասնագիտութիւնների մօտ 100 ներկայացուցիչներ: Այդ նոյն նպատակներով նոյնքան սովետահայ գիտնականներ եղել են աշխարհի տարբեր երկրների գիտական խոշորագոյն կենտրոններում: Հայ գիտնականների նուաճումների համաշխարհային ճանաչման ցայտուն ցուցանիշներից մէկը այն է, որ Ատոզագէտների միջազգային միութեան գործադիր կոմիտէի հերթական նիստը 1962 թ. կայացաւ Բիւրականում: Բընորոշ է, որ ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Վ. Հ. համբարձումեանը արտասահմանեան 13 ակադեմիաների պատուաւոր և թղթակից — անդամ է:

Հայաստանի գիտնականների միջազգային կապերի ընդլայնման կարևոր ցուցանիշներից է նաև միջազգային զրքափոխանակութեան աճը: Ներկայումս Հայկական ԽՍՌ գիտութիւնների ակադեմիայի կենտրոնական գրքարանը, հասարակական և կենսաբանական գիտութիւնների բաժանմունքները գրադարանները և տարբեր ինստիտուտների 23 գրադարանների զրքափոխանակութիւն են կատարում 46 երկրների 727 գիտական հիմնարկների, գրադարանների և քառանձին գիտնականների հետ: Միայն 1962 թ. արտասահման է ուղարկուած մօտ 10.000 զրքք ու ամսագիր և մօտաւորապէս այդքան էլ ստացուած է արտասահմանից:

Այս բոլորէն ետք իրաւ հայր՝ ուր ալ գտնուի միայն հըրճուանք և ուրախութիւն կրնայ զգալ, տեսնելով և կարգալով և հատորներով այն հսկայ աշխատանքները զորս կը կատարէ Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիան իր հազարաւոր գիտաշխատողներով՝ որոնք կուտան մեզի մեր թաղուած գանձերն ու ճառագայթող գիտութեան լոյսը, որոնք գիտեն թէ մեծ ժողովուրդի մը անցեալի մշակոյթին արժանի տէրերն ենք այսօր:

Հ. ԳԱՆԳՐՈՒՆԻ